Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1250[6]-26.01.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասում «հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «այդ մասով իրականացնում է հրապարակային ծանուցում» բառերով:

2) 8-րդ մասում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցումից» բառերով:

3) 9-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերություններում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասում «այն հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «այդ որոշման կայացման մասին իրականացնում է հրապարակային ծանուցում» բառերով:

Հոդված 4. Օրենքի 74-րդ հոդվածի 6.1.-ին մասում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 76-րդ հոդվածի 5-րդ մասում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերով, իսկ «մամուլի միջոցներով» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցմամբ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 80-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «մասին» բառից հետո լրացնել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերը, ինչպես նաև «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը հանել:

2) 5.1.-ին մասում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերով:

Հոդված 7. Օրենքի 85-րդ հոդվածի 2.1.-ին մասում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերով:

Հոդված 8. Օրենքի 87-րդ հոդվածի 4.1.-ին մասում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «հրապարակային ծանուցման եղանակով» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: